# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

## Ն. ՊՈՒԱԼՈՅ
## ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ

---

### ԵՐԳ Բ.

Զոր օրինակ հովուուհի՝ յոր տօնախումբ մեծապայծառ,
Ոչ համբուն չքնաղագիւտ 'ի յակընթաց կապէ զգըլխով,
Եւ անփորձ ադամանդեայ պերճ ոսկեհուռըն փայլականց՝
Քաղէ զպըճինսն ամենատենչ 'ի մօտակայ ուրեք 'ի դաշտ.
Սմպէս քաղցրաձայն 'ի նուագս, այլ յոճ անսեթևեթ
Ընտրական Հովուերգութիւն փայլեսցէ սոսկ 'ի պերճանաց։
Հիւսուած պարզ և անպաճոյճ՝ չուայլից քաւ ոչ հանդուրժեսցէ
Եւ ոչ ընդ ինքնապարծն հաճի քերթեալ տաղիցըն փուք։
Քաղցրութեան իւրում 'ի դէպ՝ մօգել, բերկրել, զարթուցանել,
Եւ մի բնաւ 'ի բոմբիւն բանից առնել կռունկն ահարեկ։
Է յաճախ սակայն զի յոճ 'ի սոյն գըրչակ տաղիցն յաւարտ
Առ մըղձկել ըլրտին՝ 'ի բաց լքեալ զնդեգն իւր և ըզփրինգ,
Եւ խանդիւ մոլեկանաւ շամբուշ 'ի հնարըս պերճանաց՝
Հովուականն անդ 'ի հագներգ՝ հարկանէ փող որոտաղոչ.
Զանգիտեալ Պան թէ լուիցեմ՝ 'ի յեղեգնուտս իջեալ ղօղի,
Եւ Ցաւերժ հարսունքն ահիւ սաքրին ընդ ջուրքք ամրածածուկ։
Ընդոստ այլ ոմն 'ի բարբառն աւանիկ բիրտ և անյարդար
Ի գեղջուկ տարադ խօսից՝ բանս 'ի բերան դընէ հովուաց.
Տաղքն անալի, անարուեստ, և 'ի շնորհաց մերկ կողոպուտ
Զերկրաւ միշտ ընդ քարշ փարեալ սողան ողորմագին.
Գոգջիր դարձ առնէ Ռոնսար պյարէն 'ի փող իւր հովուական
Ըզգեղօնսըն գոթացիս մըրմընջաձայնըս նըւագել.

digitised by A.R.A.R.@

Եւ փոխել՝ անպատկառ հընչման ձայնի և ականջաց՝
ԸզԼիկկիդաս 'ի Գիէռոյ, և ըզՓիլիս 'ի Ցուանոն.
Ի միջոց սոսա երկուց ծայրից է հուն դըժուարագնաց.
ԸզՎիրգիլ և զԹէոկրիտ 'ի նոյն կալջիր քեզ առաջնորդ.
Ազդեցեալքն 'ի Շնորհաց նոցին գըրեան զողորախօսիկ
Մի՛ յոլոյդ տացեն հրաժեշտ, Թերթեա՛ զնոսին զտիւ և զիշեր.
Է նոցա միայն ներկուռ տողիւքն յարուեստ ըզքեզ մարզել
Ցոր ինչ չափ է խոնարհել քերթողին, քան 'ի գըձձութիւն.
Երգել զՓլորա և զդաշտորայս, ըզՊոմոնա և զմըրգաստանս.
Սրընգահար մըրցութեամբ զհովուաց երկուց վառել զոգիս.
Բարձր ըզսիրոյն հեշտալեաց առնել զհրապոյրըս քաղցրաւէտ.
Ի ծաղիկ փոխել զՆարկիս, զԴափնի դալար պատել 'ի մորչ.
Եւ կամ որ իսկ այն արուեստ, որով համայն Հովուերգութիւն
Արժանի բըդեշխութեան առնէ զմայրիս և զդաշտավայրս.
Այս աւասիկ իցեն շնորհք, քերթածիս սոյն այս ուժգնութիւն.
Ցօճ դոյզն ինչ վեհագոյն, բայց ոչ յանդուգն արձակաձայն
Կեղերջականըն Եղերերգ՝ 'ի ձորձ սըգոյն երկայնաձիգ
Կոծ առեալ զխաճապաղ գիտէ զնաշիւ զընել աշխար.
Շողոմէ, սպառնայ, զգըրգռէ, խաղաղէ զսիրողըն սիրանոյշ.
Այլ յառոյդ ներկարագիր բանիւ խանդիցս ազնըւագոյթ՝
Չէ շատ քերթող ևեթ լինել, սրարբեցելումեն պէտք 'ի սէր.
Ատելի յաչս իմ պըւէտք սին՝ բըռնաջան որոց Մուսայ
Ըզխանդիցն ինձ ճառ արկեալ՝ և կայ և մնայ ցըրտասառոյց.
Այց արուեստիւըն չարատանջ, մոլեալք յիմաստ խըրթնածածուկ՝
Կերպանեան 'ի յոլոր տաղից երկշոտ տարփաւորք.
Նոյն գողտրիկ մըտացըն Թուիչք՝ ին վայրաբան մնասեաց հընչմունք.
Ի կապանս ևեթ ուսան նոքա զանձինըս վարակել,
Օրհնել զչարակրութիւն զիւրեանց, պաշտել զբանտ արգելից,
Եւ զըզգայունս և ըզբան ընդ իրերաց ածել 'ի վէգ.
Ոչ արդեօք յեղանակ 'ի սոյն երբեմն էր ծաղրալից
Սիրոյն տաղըս Թելադրել 'ի մըրմունջ ձայնըս Տիբուլեայ,
Կամ ազդեալ շունչ և հոգի գողտր յՕվիդեայն յանոյշ գեղգեղ
Զարուեստին իւր ուանդել նըմա զօրէնըս սըխրալիս.
Ըզսըրտին միայն բարբառ արձակեսցեն եղերք երգոց.
Տաղն 'ի պերճըս ճոխագոյն և ոչ ընդհատ կորովաբան,
Խոյանօքըն սիգապանծ ամբարձալթռիչ եթերաճեմ,
Ի տողս իւր չափածոյս գայ խառն 'ի խօսս ընդ աստուածոց.
Բանայ զխաղուց 'ի Պիսա զկըրկէս ըմբիշ նահատակաց,
Ի ծայր ասպարիզին երգէ զյաղթողըն փոշելից,
Զարինառուշտն ածէ յափունըս Սիմոյեայ զԱքիլլեւս,
Կամ զՆօգոյ կորացուցեալ հակէ՛նդ լըծով Լուդովիկեայ.

Մերթ զօրէն մեղուաց 'ի գործ իւր փութաժիր արագ արագ
Ելեալ յափն ուրեք ճեպով թըռչի ծաղկանց 'ի կողոպուտ։
Նա վխընջոյս, ըզկաքաւս և ըզխընծիղս հանէ 'ի գիր.
Դըրուատէ զքաղեալն համբոյր զտռ 'ի չըրթանց իւիր,
Որոյ ժոյժ կալեալ մեղմով ու 'ի թափ բերման իմն հեշտալի
Զլանայ մերթ ընդ մերթ՝ անդրէն տարփմամբ ուժգին զայն չըրթելոյ։
Յաճախ բուռն ուճոյ բանին ճեմք են ոտից զիարդուպէտ,
Շըփոթք խառնակութեանց՝ առ Նըմա գիւտ ճարտարարուեստ։
Ի բաց երկչոտքն այն չափաբանք, որոց ոգի սառնասառոյց
Ի փորոտալ անդ պատկառ կայ կանոնաց խրատականին.
Այց գիւցազին առեալ 'ի յերգս ըզփառապանծ բարգաւաճանս,
Պատմաբանքդ ըստերջք ըզհետ գնացեն կարգաց ժամանակի։
Վայրիկ մի և ըզկէտ բանին չիշխեն թողուլ յաչաց.
Ըզլիլ 'ի բուռն առնուլ 'ի դէպ՝ չև Նախ Դոլեայ տիրապետեալ.
Եւ զի տողք Նոցին ճըշդեալք, ըստ Մէզըրեայն օրինակի,
Ըզպատնէշըս պատուարաց կուրտրեայ արկեալ իցեն կործան։
Ճըշդելով միշտ ճըշդեաց Նոցին ըզգրոց իւր Ապոլոն։
Ատուածս այս Նորահրաշ յաւուր միում՝ աւանդեն զրոյցք,
կամեցեալ զրաւ առնել չափաբանից զալլիացւոց՝
Խըստամբեր օրինացըն Նըւագաց եղև գըտակ,
Պատուէր ետ՝ վերջայանգքն 'ի կուգաչափ քառեակս երկուս
Նոյնաձայն կըրկնութեամբ ութիցըս զունկըն բախեսցեն,
Եւ վեցք ըստ Նըմանէն ոլորեալ տողք արուեստագիւտ
Տրոհիցին 'ի մըտաց բանէն յերրեակըս զուգաթիւս։
Քան զայլոց՝ նա զքերթածիս արգել կարճեաց զազատութիւն.
Նոյն ինքնին կըշռեաց ըզթիւ սորա, զչափուց դաշնակութիւն.
Իւ ոչ ետ տող անզօր թէ երբեք գամս 'ի Նմա գըտցէ,
Քաւ և գամ մի մուտ գըտեալ բառ՝ անդէն յակն անկանիցի։
Բայց և 'ի գեղ գերաքանչ ըզնոյն պըճնեաց ճոխապաճոյճ.
Նըւագ մի զերծ 'ի մեղաց՝ արժէ զքերթած երկայնաձիգ։
Այլ Նանիր բիւր քերթողաց յոյն Նըկըրտել հաշիցին միտք,
Դեռ զերջանիկս այս փիւնիկ տակաւին գործ է գտանել։
Արժանիս զարմանաց՝ հազիւ հազիւ թէ՝ Նծայեսցեն
Գոմբոյ, Մայնար և Մալըրվիլ՝ երկուս երիս 'ի հազարաց.
Այլք համայն յընթերցողաց զուրկ՝ Պէլըտեայ Նուագացն հանգոյն
Ի Սերսեայ անկան ընդոստ առ վաճառողըն պարենից։
Զափն՝ է զի յոյժ երկայնաձիգ գըտեալ յաւէտ, մերթ կարի սուղ՝
Առ չելանել իմաստիցն ըստ կանոնեալ սահմանին կէտ։
Ողագոյն բանիցն յոլորս և Լէս ազատ Արձանագիր
Մի միակ բան է հանճարեղ սըրեալ յաճախ 'ի տողս երկուս։

Շարունակելի Թրգմ. Հ. ԹԱԴԷՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@